106/320
=100=

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ)

Կազմեց Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՂԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1927 Թ.

368.4

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ)

Կազմեց Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԱՊԴՐԱՄԱՐԿՂԻ

ՅԵՐԵՎԱՆ 1927 Թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏ 1254 ԳՐԱՌ 511 Բ.
ՏԻՐԱԺ 1500

ՀԱՅԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ
11-26572գր

# ՆԱԽԱԲԱՆ

Սոցիալական Ապահովագրությունը Հայաստանում ունի ընդամենը 4 տարվա պատմություն և պարզ է, որ այդ կարճ ժամանակամիջոցում նա չէր կարող այն չափով ժողովրդականանալ, որ յուրաքանչյուր մի ապահովագրված կատարելապես ծանոթ լիներ Սոցապահովագրության ասպարիզում գոյություն ունեցող որենքներին և կիրառվող կանոններին, մանավանդ որ Սոցիալական Ապահովագրության որենքներն ու կանոնները հաճախակի փոփոխվում են և գնալով ավելի բարդանում: 1927 թ. համարյա սկզբից (հունվարի 13-ն, մայիսի 19-ն և այլն) Սոցիալական Ապահովագրության Համամիութենական Խորհրդի կողմից հրատարակվում են մի շարք որենքներ, որոնք մինչ այդ ժամանակ յեղած որենքների և կանոնների մեջ մեծ և հիմնական փոփոխություններ են մտցնում:

Ապահովագրված մասսային ընդառաջելու և սոցիալական ապահովագրության ասպարեզում գոյություն ունեցող որենքներին ու կիրառվող կանոններին ծանոթացնելու նպատակով հանձն եմ առել այս աշխատանքը, ոգտվելով Աշխատանքի Որենսգրքից և 1927 թ. ընթացքում հրատարակված որենքներից, որոնք և Հայաստանի Հանրապետական Սոցիալական Ապահովագրության Գանձարկղի Կազմակերպչական Բաժնի ղեկավարող շրջաբերական նամակների հիմքն են կազմել:

Հեռու յեմ այն մտքից, որ կատարածս աշխատանքը անթերի լինի, սակայն խորապես համոզված եմ, որ ոչ միայն յուրաքանչյուր մի ապահովագրված, այլև այդ ասպարիզում աշխատող անձն կարող կ՚լինի իրեն հետաքրքրող ամենաանհրաժեշտ և եյական որենքն և կանոնը գտնել նրանում: Ահա այդ համոզմունքով ել Հայաստանի Արհեստակցական Միությունների V-րդ Համագումարի նախորյակին հրատարակության եմ հանձնում աշխատանքս:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

# Ո՞Վ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Սոցիալական ապահովագրության գծով ապահովագրված են համարվում բոլոր՝ թե մշտական և թե ժամանակավոր բանվորներն ու ծառայողները, վոր վարձու աշխատանք են կատարում պետական, հասարակական, կոոպերատիվ և մասնավոր հիմնարկություններում, ձեռնարկություններում և տնտեսություններում, ինչպես և առանձին մարդկանց մոտ, սկսած վարձու աշխատանքի մտնելու առաջին իսկ որից, թեկուզ նրանք ընդունված լինեն փորձառնական աշխատանքի, աշակերտելու և կամ ժամանակավոր կարճատև աշխատանքի, անկախ նրանց աշխատանքը վարձատրելու ձևից (Աշխատանքի Օրենսգիրք, հոդված 175. տես հավելված № 1):

Ապահովագրվելու համար իրենք բանվորներն ու ծառայողները Սոցիալական Ապահովագրության մարմիններին վոչինչ չեն վճարում, այլ վճարում են նրանց վարձող անձինք և հիմնարկությունները, ձեռնարկություններն ու տնտեսությունները (Աշխօրենսգիրք, հոդված 178. տես հավելված № 2):

Վարձու բանվորն ու ծառայողը չի զրկվում ապահովագրված լինելու իրավունքից և իրեն հասանելի նպաստն ու կենսաթոշակը ստանում է անկախ այն բանից, թե իրեն վարձող անձը, հիմնարկությունը, ձեռնարկությունը և տնտեսությունը սոցապմարմիններին հասանելի սոցիալական ապահովագրական վճարները ժամանակին է մուծել, թե բոլորովին չի մուծել (Աշխօրենսգիրք, հոդված 191. տես հավելված № 3):

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՏՐՎՈՂ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սոցիալական Ապահովագրական գանձարկղները տալիս են հետևյալ նպաստներն ու թոշակները·

1. Նպաստ ժամանակավոր անաշխատունակության դեպքում (հիվանդության, հղության և ծննդաբերության ժամանակաշրջանում):



2. Նպաստ գործազրկության դեպքում:

3. Նպաստ ծննդաբերության դեպքում՝ նորածին մանկան համար անհրաժեշտ իրերը գնելու (միանվագ նպաստ):

4. Նպաստ նորածին մանկանը կերակրելու համար (սննդադրամ):

5. Նպաստ ապահովագրված բանվորի, ծառայողի կամ նրանց ընտանիքի անդամների մահանալու դեպքում թաղման ծախքերը հոգալու համար (թաղման նպաստ):

6. Կենսաթոշակ վարձու աշխատանքի մեջ կամ նրա հետևանքով խեղանդամացած բանվորներին և ծառայողներին (հաշմանդամներին):

7. Կենսաթոշակ վարձու աշխատանքում արհեստակցական հիվանդությունների հետևանքով աշխատունակությունը կորցրած բանվորներին ու ծառայողներին (հաշմանդամներին):

8. Կենսաթոշակ աշխատանքի մեջ ստացած ընդհանուր հիվանդությունների կամ զառամության (ծերության) հետևանքով աշխատունակությունը մշտապես կորցրած բանվորներին ու ծառայողներին (աշխատանքի անկարներին):

9. Կենսաթոշակ մահացած ապահովագրվածների ընտանիքների անաշխատունակ անդամներին (մահացածի ընտանիքներին):

10. Բժշկական լիակատար օգնություն (բուժարանային, հիվանդանոցային և մասնագիտական) բոլոր ապահովագրվածներին և նրանց խնամքին ապրող ընտանիքի անաշխատունակ անդամներին (Աշխօրենսգիրք, հոդված 176. տես հավելված № 4):

Տարվա յեղանակի հետ կապված աշխատանք կատարողների՝ սեզոնային բանվորների մի քանի տեսակները, վորոնց համար այդ աշխատանքը չի հանդիսանում նրանց ապրուստի հիմնական աղբյուրը, ապահովագրվում են վոչ թե լրիվ չափով, այլ մասնակի, այսինքն վերևում թված ապահովության բոլոր տեսակներից չեն ոգտվում (Տես էջ «    » «Մասնակի ապահովագրում»):

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

### Ի՞ՆՉ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ ՏՐՎՈՒՄ

Սոցիալական ապահովագրության մարմինները (սոցապգանձարկղներն ու կայանները) ապահովագրվածներին ժամանա

վոր անաշխատունակության նպաստ են տալիս, յերբ ժամանակավոր անաշխատունակությունը առաջացել է.

1. Հիվանդության հետևանքով (ընդհանուր հիվանդությունների, արհեստակցական հիվանդությունների, աշխատանքային կամ կենցաղային խեղանդամության հետևանքով)։

2. Հղության և ծննդաբերության հետևանքով։

3. Տարափոխիկ կամ համաճարակային հիվանդությունների հետևանքով՝ մեկուսացման կամ քարանտինի ժամանակ։

4. Ընտանիքի հիվանդ անդամին խնամելու անհրաժեշտության դեպքում։

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է միայն այն դեպքում, յերբ ժամանակավոր անաշխատունակությունը տեղի յե ունեցել վարձու աշխատանք կատարելու ժամանակամիջոցում։

Նպաստը չի տրվում, յեթե ժամանակավոր անաշխատունակությունը տեղի յե ունեցել վարձու աշխատանքից արձակվելուց հետո թեկուզ այն ժամանակամիջոցում, վորի համար արձակուրդի (դուրս յելքի, լուծարքի) նպաստ է ստացել ապահովագրվածը, այլ խոսքերով աշխատանքից արձակվելու որից հետո, յերբել ուզում է տեղի ունեցած լինի ժամանակավոր անաշխատունակությունը, նպաստ չե տրվում։

Հղության և ծննդաբերության հետևանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում կին բանվոր-ծառայողներին նպաստը տրվում է այն ժամանակ, յերբ նրանք մինչ հղության պատճառով արձակուրդ ստանալու օրը վարձու աշխատանք կատարած կ'լինին վոչ պակաս, քան 6 ամիս, կամ այլ խոսքերով վեց ամսվա աշխատանքային անընդհատ ստաժ կունենան*)։ Պահանջվող այդ 6 ամսյա ստաժի մեջ է մտնում նաև այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում ժամանակավոր անաշխատունակ է յեղել և Սոցապդանձարկղից նպաստ ստացել։

Ծանոթ. Պահանջվող 6 ամսյա ստաժի մեջ չի մտնում և այն չե ընդհատում.1) գործազրկության ամբողջ ժամանակամիջոցը, յեթե նա տոմարագրված է յեղել աշխատանքի Բորսայում և կամ նրա բացակայության դեպքում համապատասխան արհեստակցական միությունններում, իսկ առանց հիշյալ տոմարագրության այն գործազրկության ժամանակամիջոցը, վոր ընդհանուր առմամբ 6 ամսից չե անցած, 2) դպրոցներում և արհեստանոցներում աշակերտելու ժամանակամիջոցը և 3) կալանքի տակ գտնվելու ժամանակամիջոցը։



Կին աշխատավորները, յեթե ֆիզիքական աշխատանք են կատարում, արձակուրդ են ստանում կամ այլ խոսքերով ժամանակավոր անաշխատունակ են համարվում 8 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթ էլ հետո, իսկ յեթե մտավոր աշխատանք են կատարում՝ 6 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 6 շաբաթ էլ ծննդաբերությունից հետո (Աշխօրենսգիրք հոդված 132, տես հավելված № 5)։ Կան մտավոր այնպիսի աշխատանքներ, վորոնք հավասարեցրված են ֆիզիքական աշխատանքի և այդ աշխատանքը կատարողները ստանում են արձակուրդ 8 շաբաթ ծննդաբերությունից առաջ և 8 շաբաթ հետո։ Այդ աշխատանքի ցուցակը հրատարակված է առանձին դեկրետով (Տես հավելված № 6)։

Ժամանակավոր աշխատավորներին ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է միայն մինչև վարձու աշխատանքի պայմանաժամի լրանալը, իսկ անվորոշ ժամանակով աշխատողներին վոչ ավելի 2 ամսից, սկսած աշխատանքի մտնելու օրից։ Սահմանված վերոհիշյալ ժամկետները լրանալուց հետո ժամանակավոր անաշխատունակ ժամանակավոր աշխատավորներին տրվում է միայն գործազրկության նպաստ, յեթե նրանք այդ նպաստը ստանալու իրավունքը ունեն (Տես էջ «    »)։ Սեզոնային աշխատավորներին ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է մինչև սեզոնի վերջը։

### ՎՈ՞ՐՏԵՂԻՑ ՊԻՏԻ ՍՏԱՆԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը պետք է ստանալ այն շրջանի, գավառի կամ գավառակի Սոցիալական Ապահովագրության դանձարկղներից կամ նրանց ճյուղ՝ կայաններից, վորտեղ վոր աշխատում է ինքը ապահովագրվածը։

Կարճատև հիվանդությունների դեպքում նպաստը տրվում է

*) Ծանոթ. 6 ամսյա ստաժի պահանջը Սոցապ. Համամիութենական խորհրդի 30 նոյեմբ. 27 թ. № 387 վորոշմամբ խափան վերացված է 1928 թ. հունվարի 1-ից։ Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

տողջանալուց հետո անմիջապես, իսկ յերկարատև հիվանդությունների դեպքում նպաստը տրվում է յերկու շաբաթը կամ ամիսը մեկ անգամ պատշաճ փաստաթղթերը համապատասխան Սոցապմարմնին հանձնելուց հետո վրա յերրորդ օրը:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

*Սոցապմարմինները ժամանակավոր անաշխատունակության նպաստը տալիս են միմիայն հիվանդանոցային թերթիկներով, վորոնք լրացնում և տրվում են ապահովագրված ժամանակավոր անաշխատունակներին բուժարաններում (ամբուլատորյաներում), հիվանդանոցներում և այլ բուժական հիմնարկներում բուժող բժիշկների կամ բժշկական կոնսուլտացիաների կողմից:*

*Բուժող բժիշկները ապահովագրվածին կարող են աշխատանքից ազատել վոչ ավելի քան 5 օրով յուրաքանչյուր անգամին, իսկ ընդհանուր առմամբ վոչ ավելի քան 15 օրով: Ավելի յերկարատև արձակուրդ կարող են տալ բժշկական կոնսուլտացիաները և Սոցապդանձարկղների Բժշկական Վերստուգիչ Հանձնաժողովները:*

*Հղության հետեվանքով արձակուրդ կարող են տալ բացառապես բժշկական կոնսուլտացիաները կամ Սոցապդանձարկղների Բժշկական Վերստուգիչ Հանձնաժողովները:*

*Հիվանդանոցային թերթիկը պիտի վավերացված լինի հիմնարկության, ձեռնարկության, տնտեսության կամ վարձող անձի կողմից:*

*Ապահովագրվածը պարտավոր է իր հիվանդանոցային թերթիկը, նախքան Սոցապմարմնին ներկայացնելը, վավերացնել տալ այն հիմնարկ-ձեռնարկությունում, վորում նա աշխատում է: Տվյալ հիմնարկ-ձեռնակրությունը պարտավոր է լրացնելու հիվանդանոցային թերթիկի այն մասը, վորը իրեն է վերաբերում: Բացի նրանից, վոր նա նշելու յե իր անունը և հասցեն, մուծվող ապավճարի չափը և թե ինչ ժամանակվանից է ապահովագրվածը աշխատում իր մոտ, նաև պարտավոր է հիշատակել.*

*1. Ժամանակավոր անաշխատունակության հետեվանքով յերբվանի՞ց է ապահովագրվածը դադարեցրել իր աշխատանքը:*



*2. Յերբվանի՞ց է ապահովագրվածը նորից աշխատանքի անցել (կամ դեռ չի անցել):*

*3. Ժամանակավոր անաշխատունակությունը արդյոք տեղի չի՞ ունեցել արձակուրդի օգտագործման ժամանակամիջոցում (հերթական, լրացուցիչ կամ մասնավոր առանց աշխատավարձի պահպանման), կամ այն ժամանակամիջոցում, յերբ ձեռնարկությունը անցած է յեղել կրճատ բանվորական օրերի և կամ յերբ ձեռնարկության աշխատանքները դադարեցված են յեղել:*

*4. Վո՞րքան ժամանակով է վարձված յեղել ապահովագրվածը՝ մշտական է, սեզոնային, թե ժամանակավոր:*

*5. Տեղեկություններ աշխատավարձի մասին.*

*ա) Ապահովագրվածի տարիֆային դրույքը.*

*բ) Ժամանակավոր աշխատունակի փաստացի դադումը նախորդ տոմարագրական 3 ամիսների ընթացքում, յեթե նա տվյալ հիմնարկ-ձեռնարկությունում 3 ամսից ավել է աշխատել.*

*գ) Յեթե ժամանակավոր անաշխատունակը տվյալ հիմնարկ-ձեռնարկությունում 3 ամսից պակաս է աշխատել, հիվանդանոցային թերթիկում նշվում է նրա փաստացի դադումը աշխատանքի ամբողջ ժամանակամիջոցում, ըստ վորում այդ դադումը պիտի ցույց տալ ըստ ամիսների և առանձին հիշել, թե յերբվանի՞ց է նա աշխատում:*

*Յեթե տվյալ հիմնարկ-ձեռնարկությունում աշխատավորների վարձատրման առթիվ վորևէ առանձին կարգ է սահմանված պետք է այն ևս հիշատակել հիվանդանոցային թերթիկում:*

*Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելու համար հիմք է ընդունվում ապահովագրվածի փաստացի ընդհանուր դադումը, վորի մեջ է մտնում.*

*ա) Նորմալ աշխատանքի վարձատրությունը.*

*բ) Գերարտադրության վարձատրությունը.*

*գ) Իբրև վարձատրություն տրվող մթերքի արժեքը.*

*դ) Սիստեմատիկ բնույթ կրող պարգևատրումները, %-ային վարձատրությունը, այլ և անցյալում ժամանակավոր անաշխատունակության համար ստացած նպաստը:*

*Արձակման (լուծարքի) նպաստը, գործուղման համար տրվող օրապահիկները, չօգտագործած արձակուրդի դրամական*

փոխհատուցումը, տանտյեմանները, հատուկ հանձնարարությունների կատարման համար միանվագ տրվող պարգևները և վարձատրությունը աշխատավարձի կամ փաստացի դաղումի գումարի մեջ չեն մտցրվում և ժամանակավոր անաշխատունակության նպաստը վորոշելիս հաշվի չեն առնվում:

## ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը վորոշելիս հիմք է ընդունվում ապահովագրվածի մինչ ժամանակավորապես անաշխատունակ դառնալը ունեցած նախորդ յերեք ամիսների ընդհանուր դաղումը: Մեկ օրվա նպաստի չափը վորոշելու համար մատնանշված հիմք ընդունվող ընդհանուր դաղումի գումարը բաժանվում է տվյալ ժամանակամիջոցի բոլոր բանվորական օրերի թվի վրա: Նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողված բոլոր տոմարագրական օրերի համար:

Յեթե ապահովագրվածը վերջին գործում մինչ ժամանակավոր անաշխատունակության ամսի սկիզբը 3 ամսից պակաս է աշխատել, մի օրվա նպաստի չափը վորոշելու համար, վերցվում է նրա մինչ ժամանակավոր անաշխատունակության ամսի մեկը ունեցած ամբողջ դաղումը և բաժանվում տվյալ ժամանակամիջոցի տոմարագրական բոլոր բանվորական օրերի թվի վրա:

Յեթե ապահովագրվածը մինչ ժամանակավոր անաշխատունակության ամսի սկիզբը մեկ ամսից պակաս է աշխատել, այդ դեպքում նպաստը վորոշելու համար վերցվում է նրա ամսեկան աշխատավարձը, յեթե ամսով է աշխատում, իսկ յեթե հատով է աշխատում (գործարքով), վերցվում է նրա տվյալ ժամանակամիջոցի ամբողջ դաղումը և ըստ այնմ վորոշվում նպաստի չափը, վորը հատով աշխատողի համար չի կարող նրա մեկ և կեսնոց դրույքից ավելի լինել:

Այն ապահովագրվածների, վորոնք ըստ իրենց արհեստի բնույթի չարունակ մի աշխատանքից մյուսին են անցնում, աշխատելով զանազան վարձողների մոտ (կառուցողներ, բեռնակիրներ, և այլն), ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվելիս, վերցվում է նրանց ամբողջ դաղումը, բոլոր աշխատանքներում, ժամանակավոր անաշխատունակության համար ստացած



նպաստը նախորդ յերկու ամիսների ընթացքում և բաժանվում տվյալ յերկու ամիսների տոմարագրական բոլոր բանվորական օրերի թվի վրա և ստացվում նրա մի օրվա դաղումը, վորի չափով էլ ժամանակավոր անաշխատունակության նպաստն է տրվում տոմարագրական միմիայն բանվորական օրերի համար: Այն դեպքում, յերբ տվյալ ձևով մի օրվա նպաստը նրա օրական դաղումից պակաս լինի, պետք է նպաստը տալ տարիֆ դրույքի չափով:

## ՆՊԱՍՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

Ժամանակավոր անաշխատունակության առավելագույն չափը կապ ունի վոչ միայն ապահովագրվածի դաղումի հետ, այլ և կապ ունի այն վայրերի հետ, վորտեղ նա աշխատում է: Խ.Ս.Հ. Միության ամբողջ յերկիրը սոցիալական ապահովագրության գծով բաժանված են առանձին 6 գոտիների և յուրաքանչյուր գոտու համար ժամանակավոր անաշխատունակության առանձին առավելագույն չափ է սահմանված, վորից ավելի չի վճարվում և վոչ վոքի:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻՑ ԶՐԿԵԼԸ

Ապահովագրվածին ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում.

1. Յերբ ապահովագրվածը ժամանակավոր անաշխատունակ է դառել սուր արբեցողության (գինովության) հետևանքով և կամ արբեցողության հետ կապված դեպքերի հետևանքով (կռվի, վիրավորվելու և այլ դեպքերում), յեթե ժամանակավոր անաշխատունակությունը տևվում է վոչ ավելի քան 3 օր:

2. Յեթե ապահովագրվածը ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու նպատակով դիտավորյալ կերպով վնաս է հասցրել իր առողջությանը և ժամանակավոր անաշխատունակ դառել: Այս դեպքում առաջին իսկ օրից նպաստ չի տրվում և սխալմամբ տրվածը հետ է գանձվում:

3. Յերբ բուժվելու համար տրված արձակուրդն օգտագործվել է այլ նպատակի համար:

4. Յերբ ապահովագրվածն արհեստականորեն վատթարացնում է իր հիվանդությունը:

5. Յերբ ապահովագրվածն անհարգելի պատճառով չի ներկայանում բժշկական վերաքննության:

Հիշյալ դեպքերում ժամանակավոր անաշխատունակության նպաստի տվչությունը դադարեցվում է այն օրվանից, երբ այդ դեպքերը պարզվում են և հաստատվում, սակայն անցյալի համար տրված նպաստը հետ չի գանձվում, բացի 2-րդ կետում հիշված դեպքից

Նպաստը ստանալու համար հանցավոր գործողություններ (փաստաթղթերի գեղծում և այլն) կատարելու դեպքում, ժամանակավոր անաշխատունակության նպաստի տվչությունը կասեցվում է մինչև դատարանական վճիռ կայացնելը և ըստ այնմ վճարվում:

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Ապահովագրվածին ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է վոչ շուտ, քան հիվանդության 2 շաբաթը անցնելուց հետո, յեթե նա 2 շաբաթից ավել է տեվել, իսկ յեթե պակաս է տեվել, աշխատունակությունը վերականգնելուց հետո անմիջապես առաջին 3 որվա ընթացքում:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստը ստանալու համար պիտի դիմել համապատասխան Սոցապգանձարկղին վոչ ուշ, քան աշխատունակությունը վերականգնելու որից առաջին վեց ամսի ընթացքում և վճարվում է մինչև հայտարարությունը տալու որից առ առավելն անցյալ մեկ տարի ժամանակամիջոցի համար:

# ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՊԱՍՏՆԵՐ

## ԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏ

Ապահովագրվածին յերեխա ծնվելու դեպքում Սոցապգանձարկղից հետևյալ նպաստներն են տրվում.

1. Միանվագ նպաստ (մանկան օժիտ) նորածին մանուկի համար անհրաժեշտ իրերը գնելու համար, և

2. Ամենամսյա նպաստ (սննդագրամ) նորածին մանուկի ծննդյան որից ինը ամսի ընթացքում կերակրելու (սնելու) համար:

Այս նպաստները կոչվում են լրացուցիչ նպաստներ:

Ապահովագրված կին աշխատավորները թե միանվագը և թե սննդագրամը ստանում են այն դեպքում միայն, յեթե նրանք մինչ հղության արձակուրդ ստանալը 6 ամիս վարձու աշխատանք են կատարել և այդ արձակուրդի համար ժամանակավոր անաշխատունակության նպաստի իրավունքն են ունեցել (6 ամսյա աշխատանքային ստաժի մասին տես գլուխ «Ինչ դեպքերում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում», եջ ):*)

Յերբ յերեխա յե ծնում ապահովագրվածի կինը, այդ դեպքում միանվագ նպաստը և սննդագրամը տալու համար ապահովագրվածից պահանջվում է 6 ամսյա աշխատանքային ստաժ մինչ յերեխայի ծննդյան որը:

Միանվագ նպաստը ստանալու համար ապահովագրվածը պարտավոր է Սոցապգանձարկղին ներկայացնել.

1. Աշխատանքային ստաժն ապացուցող հաշվեգրքույկը կամ հիմնարկ-ձեռնարկության վկայականը:

2. Զագսի վկայականը յերեխայի ծննդյան մասին կամ նրա պատճեն:

3. Տնային վարչության, գյուղխորհրդի և այլ նման հիմնարկությունների վկայականը յերեխայի բնակավայրի մասին:

Յերեխայի համար միանվագ նպաստը և սննդագրամը չի տրրվում, յեթե ապահովագրվածը տվյալ վայրի համար սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստի առավելագույն չափից բարձր աշխատավարձ է ստանում:

Գործազուրկ կանանց և գործազուրկների կանանց յերեխայի միանվագ նպաստը և սննդագրամը տրվում է այն դեպքում միայն, յեթե գործազուրկը ապահովագրված է և գործազրկության նպաստ է ստանում, կամ յեթե գործազրկության նպաստը ստանալիս է յեղել և այն դադարեցվել է ժամկետը լրանալու հետևանքով և տվյալ գործազրկության ժամանակաշրջանում գործազրկության առաջին նպաստը նշանակելու որից մեկ տարին չի անցել և նա մինչև գործազրկությունը վարձու աշխատանք է կատարել վոչ պակաս քան 6 ամիս:

---

Ծանոթ. 6 ամսյա ստաժի պահանջը Սոցապ. Համամիութենական Խորհրդի 30 նոյեմբերի 27 թ. № 388 վորոշմամբ 1928 թ. հունվարի 1-ից վերացվում է, վորի հետևանքով մինչև 1 հունվարի 28 թ. ծնված յերեխաների սննդագրամը տրվում է:

Հ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Գործավորները յերեխայի համար միանվագ նպաստ և սննդադրամ ստանալու համար պարտավոր են Սոցապգանձարկղին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը·

1· Գործազրկության նպաստ ստանալը ապացուցող թերթիկը կամ գրքույկը·

2· Յեթե գործազրկության նպաստի տվչությունը դադարեցված է, Սոցապգանձարկղի տեղեկանքն այդ մասին·

3· Մինչ գործազրկությունը 6 ամիս վարձու աշխատանք կատարելը հաստատող վկայականը կամ հաշվեգրքույկը:

4· Զագսի վկայականը յերեխայի ծննդյան մասին:

5· Տնային վարչության, գյուղխորհրդի և այլ նման հիմնարկությունների վկայականը յերեխայի բնակավայրի մասին:

Թոշակառու կանանց և թոշակառուների կանանց, ինչպես և վաստակավոր ուսուցիչներին, յերեխայի համար միանվագ նպաստը և սննդադրամը տրվում է անկախ աշխատանքային ստաժից, վորոնցից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը·

1· Թոշակի գրքույկը·

2· Զագսի վկայականը յերեխայի ծննդյան մասին, և

3· Վկայական յերեխայի բնակավայրի մասին:

Այն դեպքում, յերբ յերեխայի ծնողները յերեխան ծնվելուց հետո յեն ապահովագրվածների շարքն անցել, այսինքն վարձու աշխատանքի մեջ մտել, յերեխայի համար միանվագ և սննդի նպաստը չի տրվում:

Այն դեպքում, յերբ յերեխայի նպաստ ստացող ապահովագրվածները թողնում են վարձու աշխատանքը, այսինքն դուրս են գալիս ապահովագրվածների շարքից, սննդադրամի տվչությունը դադարեցվում է:

Հղության առաջին 7 ամսի ընթացքում տեղի ունեցած վիժումների դեպքում վոչ մի նպաստ չի տրվում:

Ութերորդ կամ իններորդ ամսում մեռյալ ծնված յերեխայի համար միանվագ նպաստ չի տրվում, այլ տրվում է միայն թաղման նպաստը: Իսկ այն դեպքում, յերբ յերեխան կենդանի յե ծնվում և ապա նոր մեռնում, միանվագ նպաստը տրվում է, անկախ յերեխայի կյանքի (ապրելու) տևողությունից: Յերեխայի համար



ապահովագրվածին տրվող լրացուցիչ նպաստների չափերը սահմանված են ըստ գոտիների (նպաստի չափը ռուբլիներով տես հավելված № 7):

## ՎՈ՞ՐՏԵՂ ԵՆ ՏՐՎՈՒՄ ՅԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Յերեխայի համար միանվագ նպաստը տրվում է այն վայրի Սոցապմարմնում, վորի շրջանում ծնվել և ապրում է յերեխան: Միանվագ նպաստը տրվում է յերեխան ծնվելուց հետո, իսկ սննդադրամը տրվում է յուրաքանչյուր ամսի սկզբին: Զուխտակ ծնվելու դեպքում թե միանվագ նպաստը և թե սննդադրամը տրվում է յուրաքանչյուր յերեխայի համար առանձին: Սննդադրամ ստանալու համար ապահովագրվածին տրվում է հատուկ կտրոններից կազմված գրքույկ:

## ՅԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏԸ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Յերեխայի համար տրվող նպաստի պահանջը ներկայացվելու յե համապատասխան Սոցապմարմնին յերեխան ծնվելուց հետո, բայց վոչ ուշ քան առաջին 6 ամսի ընթացքում: Այդ ժամկետը անցնելուց հետո այլևս միանվագ նպաստը չի տրվում: Յերեխային կերակրելու համար տրվող նպաստը՝ սննդադրամը ստանալու համար պահանջը պետք է ներկայացնել յերեխան ծնվելուց հետո վոչ ուշ քան առաջին 10 ամսի ընթացքում:

# ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ

## ՅԵ՞ՐԲ Է ՏՐՎՈՒՄ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԸ

Թաղման նպաստը ևս կոչվում է լրացուցիչ ու տրվում է հետևյալ անձանց մահվան դեպքում.

1· Բոլոր վարձու աշխատանք կատարող ապահովագրված բանվորների և ծառայողների մահվան դեպքում:

2· Թոշակառու աշխատանքի անկարների, հաշմանդամների և նրանց ընտանիքի անդամների մահվան դեպքում:

3· Նպաստառու գործազուրկների և աշխատանքային կոլեկտիվներում աշխատող գործազուրկների և նրանց ընտանիքի անդամների մահվան դեպքում:

4. Հասարակական աշխատանքներում զբաղված գործազրկու-թյան նպաստ ստանալու իրավունքը ունեցող գործազուրկների և նրանց ընտանիքի անդամների մահվան դեպքում:

5. Թոշակառու ուսուցիչների և նրանց ընտանիքների անդամների մահվան դեպքում:

Թաղման նպաստը տրվում է ընտանիքի հետևյալ անդամների մահվան դեպքում. 1) ամուսնու, 2) ծնողների, 3) պապի և տատի, յեթե նրանք ապահովագրածից զատ չափահաս և աշխատունակ այլ զավակներ չունեն: 4) Զավակների, թե հարազատ և թե վորդեգրած, յեթե մահացել են մինչև 16 տարեկան հասակը: 5) Քույրերի և յեղբայրների, յեթե մահացել են մինչև 16 տարեկան հասակը:

16 տարեկանից մեծ զավակների, քույրերի և յեղբայրների մահվան դեպքում թաղման նպաստ տրվում է այն դեպքում միայն, յեթե նրանք ի ծնե անաշխատունակ են յեղել և կամ մինչ 16 տարեկան հասակը ստացած մտավոր կամ ֆիզիքական արատների հետեվանքով են անաշխատունակ դառել:

Ընտանիքի անդամների թաղման նպաստը տրվում է այն դեպքում միայն, յերբ նրանք մինչև մահանալը փաստորեն ապրելիս են յեղել ապահովագրվածի, թոշակառուի կամ նպաստառու գործազուրկի հաշվին:

Ապահովագրվածի, թոշակառուի կամ նպաստառու գործազուրկի հաշվին ապրող չեն համարվում այն անձինք, վորոնք առանձին ինքնուրույն յեկամտի աղբյուր ունեին (դաղումն, հողաբաժին, առևտուր, զբաղմունք և այլն):

## ՈՒ՞Մ Է ՏՐՎՈՒՄ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԸ

Ապահովագրվածի, թոշակառուի կամ նպաստառու գործազուրկի թաղման նպաստը տրվում է միմիայն ամուսնուն, ծնողներին, զավակներին, քույրերին և յեղբայրներին:

Ընտանիքի անդամների թաղման նպաստը տրվում է բացառապես իրեն՝ ապահովագրվածին, թոշակառուին կամ նպաստառու գործազուրկին:

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ

Թաղման նպաստի յերկու չափ է սահմանված և տարբեր գոտիների համար առանձին: 10 տարեկանից բարձր հասակ ունեցողի



թաղման նպաստը մեծ է, իսկ 10 տարեկանից ցածր հասակ ունեցողի նպաստը փոքր է: Յեթե հասակավորի թաղման համար տրվում է յենթադրենք 10 ռ., փոքրահասակի համար տրվում է նրա կեսը՝ 5 ռուբլի (նպաստի չափը տես հավելված № 7):

## ՎՈ՞ՐՏԵՂ Է ՏՐՎՈՒՄ ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԸ

Թաղման նպաստը տալիս է այն վայրի Սոցապմարմինը, վորի շրջանումն է տեղի ունեցել թաղումը:

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Ապահովագրվածի, թոշակառուի կամ նպաստառու գործազուրկի մահվան դեպքում թաղման նպաստ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Ապահովագրված բանվորի կամ ծառայողի աշխատանքի հաշվեգրքույկը կամ նրա պաշտոնատեղից տրված վկայականը: Թոշակառուի թոշակի գրքույկը: Գործազուրկի նպաստի գրքույկը, յեթե նպաստառու յե, իսկ յեթե նպաստառու չե, աշխատանքային կոլեկտիվի կամ հասարակական աշխատանք կազմակերպող մարմնի վարչության վկայականը:

2. Զագսի վկայական մահվան մասին:

3. Կատարված թաղման փաստը վավերացնող տեղեկանքը:

4. Տեղեկանք նպաստը ստացող անձի և մահացածի միջև յեղած ազգակցական կապի մասին:

Ընտանիքի անդամների թաղման նպաստը ստանալու համար պետք է ներկայացնել վերևում մատնանշված փաստաթղթերից զատ և վկայական առ այն, վոր մահացածը փաստորեն ապրելիս է յեղել ապահովագրվածի, թոշակառուի կամ նպաստառու գործազուրկի հաշվին և սեփական առանձին յեկամուտի աղբյուր չի ունեցել:

## ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Թաղման նպաստը ստանալու համար պետք է դիմել համապատասխան սոցապ մարմնին մահից հետո վոչ ուշ քան առաջին 6 ամսի ընթացքում: Այդ ժամկետից հետո տեղի ունեցած պահանջները չեն բավարարվում:

ՀԱՄԱՐ

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՈՇԱԿ

Աշխատանքի անկարներն ապահովվում են զանազան տեսակ, նայած թե ինչի հետեւանքով են նրանք անկար դառել. ընդհանուր հիվանդության և զառամության, թե՞ խեղանդամության կամ արհեստակցական հիվանդության հետեվանքով:

Ընդհանուր հիվանդությունների և զառամության (ծերության) հետեւանքով աշխատունակությունն ընդմիշտ կորցրածները կոչվում են աշխատանքի անկարներ, իսկ խեղադամության և արհեստակցական հիվանդությունների հետեւանքով աշխատունակությունը կորցրածները կոչվում են աշխատանքի հաշմանդամներ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՆԵՐԻ ԹՈՇԱԿ

### Ո՞Վ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ

Աշխատանքի անկարության թոշակ ստանալու իրավունքը ունեն բոլոր այն բանվորներն ու ծառայողները, վորոնք ճանաչված են 1-ն, 2-րդ և 3-րդ կարգի անկարներ և վորոնց անկարությունն առաջացել է վարձու աշխատանք կատարելու ժամանակ, կամ վարձու աշխատանքը դադարեցնելուց հետո առաջին մեկ տարվա ընթացքում և կամ գործազրկության նպաստ ստանալու ժամանակաշրջանում:

Զառամության հետեւանքով թոշակ ստանալու իրավունքն ունեն այն բանվորներն ու ծառայողները, վորոնք ճանաչված են 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի անկարներ և վորոնք մինչև անկար դառնալը վարձու աշխատանք են կատարել առնվազն ութ տարի (վոչ պակաս) և վորոնց հասակը 50 տարեկանից բարձր է:

Զառամության հետեւանքով աշխատանքի անկարներից պահանջվող վարձու աշխատանքի 8 ամյա ստաժի (ժամանակամիջոցի) մեջ է մտնում նաև այն ժամանակամիջոցը, վորի ընթացքում նրանք զբաղված են յեղել գործազուրկների համար կազմակերպած աշխատանքի կոլլեկտիվներում և հասարակական աշխատանքներում և կամ ժամանակավորապես անաշխատունակ են յեղել (հիվանդ), վորպիսի հանգամանքն ապացուցված է բուժհիմնարկների և կամ Սոցապմարմինների տված վկայականներով:



Վարձու աշխատանքի ստաժի մեջ չի մտնում և չի ընդհատում այն.

1. Կարմիր Բանակի և Տորմիղի շարքերում գտնվելու ժամանակամիջոցը.

2. Աշխ. Բորսայում, իսկ ուր այդպիսին չկա, համապատասխան արհեստակցական միության մեջ արձանագրած (տոմարագրած) գործազրկության ժամանակամիջոցը.

3. Աշխ. Բորսայում, իսկ ուր այդպիսին չկա, համապատասխան արհեստակցական միությունում չարձանագրված գործազրկության հետեւանքով աշխատանքի մեջ առաջացած ընդմիջումները, յեթե յուրաքանչյուր ընդմիջումը տևել է 6 ամսից վոչ ավելի, իսկ բոլոր ընդմիջումները միասին 2 տարուց վոչ ավելի.

4. Դպրոցներում ուսանելու ժամանակամիջոցը և

5. Կալանքի տակ գտնվելու ժամանակամիջոցը:

Սեզոնային աշխատանքների համար սահմանված յուրաքանչյուր մի սեզոնը համարվում է աշխատանքի լրիվ տարի:

### ԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ ՏԱԼԻՍ ԻՆՉՊԻՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ

Թոշակ ստանալու մասին Սոցապդանձարկղին դիմող աշխատանքի անկարը պարտավոր է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

1. Վկայական (հաշվեգրքույկ) վերջին պաշտոնատեղից, վորում մատնանշված է լինելու պաշտոնը կամ արհեստը, աշխատանքի մտնելու սկիզբը և վերջը և վերջին յերեք ամիսների դաշտավր յուրաքանչյուր ամսի համար առանձին:

50-ից բարձր տարիք ունեցողները պարտավոր են վարձու աշխատանքի 8-ամյա անընդհատ ստաժն ապացուցող վկայական ներկայացնել:

2. Բուժհիմնարկի կամ բուժող բժշկի վկայականը առողջության դրության մասին:

3. Վկայական բնակավայրի մասին կամ քաղվածք տնային գրքից:

Սոցապդանձարկղն աշխատանքի անկարի դիմումն իր համապատասխան փաստաթղթերով ստանալուց հետո, աշխատանքի ան-

կարին անմիջապես ուղարկում է բժշկական էքսպերտ բյուրոյին, իսկ վերջինիս բացակայության կամ հեռու գտնվելու դեպքում, Բժշկական Վերստուգիչ Հանձնաժողովին բժշկական քննությամբ պարզելու նրա անաշխատունակության աստիճանը և անկարության կարգը:

## ԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐՆԵՐԻ ԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

Աշխատանքի անկարի թոշակի չափը կապ ունի այն վայրի հետ, որտեղ նա աշխատել է վերջին ժամանակը, նայած թե այդ վայրը սոցապահովագրական տեսակետից որ գոտումն է գտնվում և աշխ–անկարի աշխատունակության կորուստի աստիճանի հետ:

Համաձայն հիմնական օրենքի, աշխատանքի անկարները բաժանվում են 3 կարգի.

1–ին կարգում դասվում են այն անկարները, որոնք ոչ միայն անկարող են որևէ աշխատանք կատարելու, այլ և կարոտ են ուրիշի խնամքի. նրանց պետք է հագցնել, կերակրել և այլն:

2–րդ կարգում դասվում են այն անկարները, որոնք թեև կարոտ չեն ուրիշի խնամքի, բայց և ոչ մի տեսակի աշխատանք կատարել չեն կարող:

3–րդ կարգում դասվում են այն անկարները, որոնք իրենց աշխատունակությունը կորցրել են 45 և բարձր տոկոսով և անկարող են այլևս իրենց արհեստով պարապել և ընդհանրապես մշտական աշխատանք կատարել ու սա խլված են այլ արհեստով (ավելի ցածր որակի) զբաղվելու և կամ պատահական և կարճատև ու թեթև աշխատանք կատարել:

Իբրև հիմնական օրենք աշխատանքի անկարների համար սահմանված են հետևյալ չափերը.

1–ին կարգի աշխ. անկարը կենսաթոշակ է ստանում իր, մինչ անկար դառնալը, վերջին 3 ամիսների ընթացքում ունեցած փաստացի միջին դաշտումի $^{2}/_{3}$–ի չափով (յեթե դադումը—60 ռ., կենսաթոշակը—40 ռ.):

1–ին կարգի աշխանկարի համար սահմանված կենսաթոշակը համարվում է լրիվ կենսաթոշակ:



2–րդ կարգի աշխանկարին կենսաթոշակ է տրվում նրա փաստացի դատումի $^{1}/_{9}$–ի չափով կամ լրիվ կենսաթոշակի (1–ին կարգի համար սահմանվածի) $^{2}/_{3}$–ի չափով:

3–րդ կարգի աշխանկարին կեսաթոշակ է տրվում նրա փաստացի դադումի $^{1}/_{3}$–ի կամ լրիվ կենսաթոշակի (1–ին կարգի համար սահմանվածի) կեսի չափով:

Անկախ վերևում առաջ բերված կենսաթոշակի հիմնական չափերից, որ մնայուն են, ժամանակավորապես սահմանված են կենսաթոշակի նվազագույն և առավելագույն չափեր տարբեր գոտիների համար առանձին և աշխատանքի անկարին կենսաթոշակ նշանակելիս վերցվում է անկարի աշխատավայրի համար սահմանված չափը, օրինակ. յեթե մեկը աշխատել է 1–ին գոտում դասված վայրում, իսկ կենսաթոշակի համար դիմել է 3–րդ գոտում գտնվող Սոցապգանձարկղին, կենսաթոշակը պետք է նշանակել 1–ին գոտու համար սահմանված չափով և ընդհակառակը:

Մի վայրից մի այլ վայր տեղափոխվելու դեպքում նրա համար սահմանված կենսաթոշակի չափը այլևս չի փոփոխվում:

Կենսաթոշակի չափը փոփոխվում է միմիայն այն դեպքում, յերբ աշխատանքի անկարն իր առողջության դրության հետևանքով փոխադրվում է անկարության մի կարգից մյուսը: (Կենսաթոշակի չափերը ռուբլիներով տես հավելված № 7):

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Նախ քան աշխատանքի անկարին կենսաթոշակ նշանակելը, Սոցապգանձարկղն իր գործակալների միջոցով քննում է տվյալ աշխատանքի անկարի գույքային և տնտեսական ընդհանուր դրությունը և յեթե պարզվի, որ նա բավականաչափ անաշխատ յեկամուտ ունի (տներից, հողերից, դրամագլխից և այլն) իսկույն և յեթ կասեցնում է նրա կենսաթոշակի տվչությունը և վերականգնում է այն, յերբ տվյալ աշխանկարի գույքային և տնտեսական դրությունը փոխվում է դեպի վատը և նա զրկվում է իր ապրուստի միջոցներից, սակայն տվչության կասեցման օրից մինչև վերականգնման օրը պիտի 3 տարին անցած չլինի, հակառակ դեպքում աշխանկարն ընդմիշտ կորցնում է իր իրավունքը:

Աշխատանքի գույքային դրությունը քննելիս հաշվի չեն առնվում հետևյալը.

1· Ցուրտյիններից ստացված նպաստն ու օգնությունը և կամ նրանց խնամքի տակ գտնվելու և ապրելու հանգամանքը:

2· Տնային չարժական գույքը (տնամիջի կարգ ու սարքը):

3· Պետական Ապահովագրական Վարչությունից անձնական ապահովման համար տրվող գումարները:

4· Անշարժ այն գույքը (տուն, պարտեզ, բանջարանոց և այլն), վորը չի շահագործվում իբրև յեկամտաբեր գույք, այլ օգտագործվում է հատկապես աշխատանքի անկարի և իր ընտանիքի կարիքների համար (տան մեջ ինքը և իր ընտանիքն են բնակվում, պարտեզի և բանջարանոցի պտուղները չեն վաճառվում և այլն):

Այն դեպքում, յերբ պարզվի, վոր ընդհանուր հիվանդություններ և կամ ծերության· հետևանքով աշխատանքի անկար դառածը ունի գյուղական տնտեսություն՝ բանջարանոց, այգի, կթի և բանվոր անասուններ, հողաբաժին և այլն, այլև առանձին դաշտումն և կամ 1–ն կարգի արտոնագրի առևտրից և վարձու տրվող տներից բավականաչափ յեկամուտ ունի, վոր գանձարկղի կարծիքով բավական է աշխատանքի անկարին և նրա ընտանիքին ապրեցնելու համար, կենսաթոշակի տվչությունը կասեցվում է:

2–րդ կարգի առևտուրը կասեցնում է կենսաթոշակի տվչությունը անկախ նրա յեկամտի չափերից:

3–րդ և ավելի բարձր կարգի առևտուրը, ինչպես և օգտվելու նպատակով վարձու բանվորների և ծառայողների աշխատանքի շահագործումը վոչ միայն կասեցնում է կենսաթոշակի տվչությունը, այլև խպառ զրկում է կենսաթոշակի իրավունքից:

Աշխատանքի անկարի ամուսնանալը չի զրկում նրան կենսաթոշակից:

Թոշակառու աշխատանքի անկարը կարող է միժամանակ վարձու աշխատանք կատարել, սակայն նրա դաշտումը հաշվի չի առնվում և ստացվող կենսաթոշակի հետ միասին չպետք է գերազանցե աշխատավարձի այն գումարից, վորը հիմք է ընդունվել կենսաթոշակի չափը վորոշելու համար:

## ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Հաշմության հետևանքով կենսաթոշակ են ստանում այն բանվորներն ու ծառայողները, վորոնք հաշմացել են աշխատանքի մեջ, այսինքն իրենց պաշտոնական պարտականություններն կատարե-



լիս և կամ նրանց հետ կապված հանգամանքներում· պաշտոնավայրը գնալ գալիս, հիմնարկ–ձեռնարկության բակում և կամ հրջակայքում, ուր նա պարտավոր եր ու կարող եր լինել և այլն:

Արհեստակցական հիվանդությունների հետևանքով կենսաթոշակ են ստանում այն բանվորներն ու ծառայողները, վորոնք իրենց աշխատունակությունը կորցրել են իրենց աշխատանքի հետևանքով առաջացած հիվանդություններից աշխատանքի ընթացքում և կամ աշխատանքը թողնելուց հետո մեկ տարի ժամանակամիջոցում:

## Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հաշմության կամ արհեստակցական հիվանդության հետևանքով աշխատունակությունը կորցրածները պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը·

1· Վարձու վերջին աշխատանքի հաշվեգրքույկը կամ հիմնարկ–ձեռնարկության վկայականը, վորում մատնանշված պիտի լինի հաշմացածի պաշտոնը, աշխատանքի մտնելու սկիզբն ու վերջը և վերջին 3 ամիսների դաշտումը:

2· Դժբախտ պատահարի մասին աշխատանքի պաշտպանության կազմած արձանագրությունը և կամ բժշկական վկայականը արհեստակցական հիվանդության մասին:

3· Քաղվածք տնային գրքերից և կամ անձնական վկայական:

## ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ-ՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

Հաշմանդամների կենսաթոշակների չափերը·

Հաշմանդամների կենսաթոշակի չափը կապ ունի նրա աշխատունակության կորուստի աստիճանի հետ:

1–ին կարգի հաշմանդամը կենսաթոշակ է ստանում իր լրիվ դաշտումի չափով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2-րդ | կարգինը | լրիվ | դաշտումի | $^3/_4$-ի | չափով |
| 3-րդ | » | » | » | $^1/_2$-ի | » |
| 4-րդ | » | » | » | $^1/_3$-ի | » |
| 5-րդ | » | » | » | $^1/_6$-ի | » |
| 6-րդ | » | » | » | $^1/_{10}$-ի | » |

4-րդ, 5-րդ և 6-րդ կարգի հաշմանդամներին կենսաթոշակ է տրվում այն դեպքում միայն, յեթե նրանք իրենց աշխատունակությունը կորցրել են 1925 թվի մայիսի 1-ից հետո:

Հաշմանդամներին կենսաթոշակ նշանակելիս բոլորովին նկատի չի առնվում նրանց գույքային և տնտեսական դրությունը, ինչպես և նրանց դաղումը:

### ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Ընդհանուր հիվանդությունների և ծերության հետևանքով աշխատանքի անկար դառածների համար կենսաթոշակ նշանակելու մասին դիմում ներկայացնելու 2 ամյա ժամկետ է սահմանված, սկսած վերջին աշխատանքը թողնելու կամ ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության վերջին նպաստը ստանալու օրից, իսկ աշխատանքային հաշմության կամ արհեստակցական հիվանդության հետևանքով հաշմանդամ դառածների համար սահմանված է 3 ամյա ժամկետ:

## ՄԱՀԱՑԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

### ՅԵ՞ՐԲ Է ՄԱՀԱՑԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆՈՒՄ

Մահացածի ընտանիքը կենսաթոշակ է ստանում այն դեպքում միայն, յերբ նրա միակ նեցուկը՝ ապահովագրված բանվորը կամ ծառայողը մահացել է վարձու աշխատանքի մեջ, ժամանակավոր անաշխատունակության (հիվանդության) և կամ գործազրկության նպաստ ստանալու ժամանակաշրջանում:

Յեթե մահացածը վարձու աշխատանքը թողնելուց հետո գործազրկության նպաստ չի ստացել, այդ դեպքում նրա ընտանիքը կենսաթոշակ է ստանում, յեթե մահը տեղի յե ունեցել վարձու աշխատանքը թողնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Կենսաթոշակ է տրվում նաև մահացած թոշակառուի կամ թոշակի իրավունքը ունեցողի ընտանիքին:

### ՄԱՀԱՑԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԻ Վ՞ՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՆ ԵՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆՈՒՄ

Մահացածի ընտանիքից կենսաթոշակ ստանալու իրավունքը ունեն հետևյալ անձինք.



1. Մահացածի խնամքին և հաշվին ապրող ծնողները, վորոնք բժշկական քննությամբ ճանաչված են անաշխատունակ և ինքնուրույն յեկամուտ չունեն:

2. Ամուսինը (տղամ.), յեթե բժշկական քննությամբ անաշխատունակ է ճանաչված, ինքնուրույն դաղումն կամ յեկամուտ չունի և ապրելիս է յեղել մահացածի (կնոջ) խնամքին և հաշվին:

3. Ամուսինը (կինը) յեթե բժշկական քննությամբ անաշխատունակ է ճանաչված, ինքնուրույն յեկամուտ կամ դաղումն չունի, իսկ յեթե աշխատունակ է, այն դեպքում միայն, յերբ մինչ 8 տարեկան հասակի յերեխա ունի:

4. Մահացածի անչափահաս (մինչև 16 տարեկան) զավակները, քույրերն ու յեղբայրները:

5. Մահացածի չափահաս զավակներից, քույրերից և յեղբայրներից նրանք, վորոնք անաշխատունակ են ի ծնե և կամ անաշխատունակ են դառել (մտավոր և ֆիզիքական արատ են ստացել) մինչև 16 տարեկան հասակը:

Ապահովագրվածի մահվան պահուն նրա ընտանիքի աշխատունակ ճանաչված և թոշակավորման վոչ յենթակա անդամները այլևս յերբեք չեն թոշակավորվում, յեթե նույնիսկ ապահովագրվածի մահից հետո կարճ ժամանակամիջոցում անաշխատունակ դառնան:

### ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Ընդհանուր պատճառներից մահացածների ընտանիքների նկատմամբ դիմում տալու համար սահմանված է 2 ամյա ժամկետ, իսկ հաշմության կամ արհեստակցական հիվանդությունների հետևանքով մահացածների նկատմամբ դիմում տալու համար սահմանված է 3 ամյա ժամկետ, սկսած նեցուկի մահվան օրից:

Ժամկետը անցած չի համարվում ամբողջ ընտանիքի համար, յեթե ընտանիքի անդամներից մեկն ու մեկը ժամանակին է դիմել իրեն կենսաթոշակ նշանակելու մասին:

### Ո՞ՒՐ ՊԻՏԻ ԴԻՄԵԼ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմումը և համապատասխան փաստաթղթերը պիտի ներկայացնել այն Սոցապգանձարկղին, վորի շրջանում վոր բնակվում է

խնդրատուն, անկախ այն բանից, թե վորտեղ է աշխատելիս յեղել մահացած ապահովագրվածը՝ ընտանիքի նեցուկը:

Բոլոր Սոցապմարմիններում ել կան տպված պատրաստի հայտարարություն—հարցացուցակի բլանկներ, պետք է ստանալ այն (տրվում է ձրի) Սոցապգանձարկղից, լրացնել և ներկայացնել, հարակցելով հետևյալ փաստաթղթերը.

1. Մահացածի աշխատանքի հաշվեգրքույկը կամ վկայականը նրա վարձու աշխատանքի մասին, իսկ յեթե թոշակառու յե, կենսաթոշակի գրքույկը:

2. Յեթե մահացածը մինչ իր մահը ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության նպաստ է ստանալիս յեղել, պետք է Սոցապգանձարկղից համապատասխան տեղեկանքը ներկայացնել:

3. Մահացածի պաշտոնատեղից տեղեկանք վերջին 3 ամիսների դաղումի չափի մասին, իսկ յեթե մահացածը յեղել է սեզոնային աշխատավոր, վերջին ամբողջ սեզոնում ունեցած դաղումի մասին:

4. Անչափահաս զավակների, քույրերի և յեղբայրների ծննդյան վկայականները:

5. Տնային Վարչության, Միլիցիայի կամ գյուղխորհրդի վկայականը մահացածի խնամքին ապրողների և նրանց գույքային դրության մասին:

6. Հաշմության կամ արհեստակցական հիվանդության հետևանքով մահացածի մասին պետք է ներկայացնել հաշմության մասին կազմած արձանագրությունը կամ արհեստակցական հիվանդացումը ապացուցող փաստաթղթերը:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

Մահացածի ընտանիքի կենսաթոշակի չափը կապ ունի ընտանիքի թոշակավորման յենթակա անդամների թվի հետ:

Այդ տեսակետից մահացածների ընտանիքները կազմում են 3 կարգ. 3 և ավելի անաշխատունակ անդամներից բաղկացած ընտանիքները դասվում են 1-ին կարգում, 2 անդամից բաղկացածները՝ 2-րդ կարգում և 1 անդամից բաղկացածները՝ 3 կարգում:



1-ին կարգում դասված մահացածի ընտանիքը ստանում է մահացածի ստացած կամ նրան հասանելիք կենսաթոշակի $^2/_3$-ը, 2-րդ կարգում դասվածը ստանում է կեսը, իսկ 3-րդ կարգում դասվածը $^1/_3$-ը:

### ՄԱՀԱՑԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

Մահացածի ընտանիքի կենսաթոշակի թե նվազագույն և թե առավելագույն չափը նշանակվում է այն գոտու համար սահմանված չափերով, վոր գոտում վոր աշխատել կամ թոշակավորվել է մահացած ապահովագրվածը:

### ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՑՈՒՄԻՑ ՄԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

Հաշմության կամ արհեստակցական հիվանդացումի հետևանքով մահացածի ընտանիքի կենսաթոշակի չափը սահմանափակում չունի, այսինքն առավելագույն կամ նվազագույն չափ չկա:

3 և ավելի անաշխատունակ անդամից բաղկացած ընտանիքը կենսաթոշակ է ստանում մահացածի փաստացի դաղումի $^3/_4$-ի չափով, 2 անդամից բաղկացածը՝ կեսի չափով և 1 անդամից բաղկացածը $^1/_3$-ի չափով: (Կենսաթոշակի չափերը ռուբլիներով տես հավելված № 7):

### ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԺԱՄԿԵՏ

Նշանակված, բայց ժամանակին չստացված կենսաթոշակը կարելի յե պահանջել այն դեպքում միայն, յեթե տվյալ ժամանակի կենսաթոշակի նշանակման որից անցել է վոչ ավելի քան մեկ տարի:

3 տարի շարունակ նշանակված կենսաթոշակը չստացող թոշակառուն իսպառ զրկվում է թոշակի իրավունքից:

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

### Ո՞Վ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՍՏԱՆԱԼՈՒ

Գործազրկության նպաստ ստանալու իրավունքը ունեն.

1. 1-ին կարգով նպաստ ստանալու իրավունքը ունեցող վո-

րակյալ բանվորները, բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ունեցող մտավոր աշխատանք կատարող անձինք և մինչ 18 տարեկան հասակի դեռահասները նպաստ են ստանում անկախ իրենց աշխատանքի ստաժի տևողությունից, միայն թե անմիջապես մինչ գործազրկությունը նրանք վարձու աշխատանք կատարած լինեն:

2· Կիսավորակյալ և անվորակ բանվորները, վորոնք մինչ գործազրկությունը աշխատանքի ստաժ ունեին, յեթե արհմիության անդամ են՝ 1 տարի տևողությամբ, իսկ յեթե անդամ չեն՝ 3 տարի տևողությամբ:

3· Բարձրագույն կամ մասնագիտական կրթություն չունեցող ծառայողները, վորոնք մինչ գործազրկությունը աշխատանքի ստաժ ունեին, յեթե Արհմիության անդամ են՝ 3 տարի տևողությամբ, իսկ յեթե անդամ չեն՝ 5 տարի տևողությամբ:

4· Կարմիր բանակից արձակված կարմիր բանակայինները, վորոնք մինչ զորակոչվելը վարձու աշխատանքի մեջ են յեղել անկախ այդ աշխատանքի տևողությունից և հրամկազմը, անկախ այն բանից, թե մինչ բանակ մտնելը վարձու աշխատանք կատարել են թե վոչ:

## ԱՇԽԲՈՐՍԱՅՈՒՄ ՏՈՄԱՐԱԳՐՎԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր գործազուրկները պարտավոր են վարձու աշխատանքը թողնելու կամ նրանցից զրկվելու դեպքում, վոչ ուշ քան առաջին 3 ամսում արձանագրվել Աշխբորսայում, իսկ ուր այդպիսիք չկան, համապատասխան արհմիություններում:

## Ի՞ՆՉՊԻՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ՊԵՏՔ ՆՊԱՍՏ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ ՏԱԼԻՍ

Գործազրկության նպաստ նշանակելու մասին դիմում տալիս պետք է տեղի սոցապգանձարկղին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը·

1· Արհմիության տոմսը, յեթե անդամ է.

2· Աշխատանքի Բորսայի տեղեկանքը գործազուրկի արձանագրված լինելու մասին·



3· Աշխատանքի հաշվեգրքույկը կամ պաշտոնատեղից տրված վկայականը, վորում պիտի մատնանշված լինի·

ա) Գործազուրկը ինքն է թողել աշխատանքը, թե արձակված է գործից, վերջին դեպքում մինչև վոր ժամանակն է արձակման նպաստ տրված:

բ) Պաշտոնը և արհեստը:

գ) Տարիֆային կարգի դրույքը և աշխատավարձը վերջին 3 ամիսների համար (սեզոնային բանվորի նկատմամբ պիտի նշել նաև սոցապվճարի չափը):

4· Այն դեպքում, յերբ աշխատանքային ստաժ է պահանջվում, պետք է համապատասխան վկայականը ներկայացնել:

5· Բանակից արձակվածները ներկայացնելու յեն զինհաշվառման տոմսը·

6· Միլիցիայի, անվարչության կամ գյուղխորհրդի վկայականը գործազուրկի գույքային դրության, յեկամուտների և դաշտամի մասին:

7· Ընտանիքի կազմը ապացուցող փաստաթուղթ:

## ՎՈ՞ՐՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ Ե ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏՐՎՈՒՄ

Գործազրկության նպաստը նշանակվում է դիմում տալու որից, բայց վոչ շուտ այն որից, մինչ վոր որը վոր արձակման նպաստ է (լուծարքի) տված:

Վորակյալ բանվորներին, վոր նպաստ են ստանում 1 կարգով, գործազրկության նպաստ է տրվում տարվա մեջ 9 ամիս, սակայն ամբողջ գործազրկության մի ժամանակաշրջանում վոչ ավելի, քան 18 ամիս:

Բոլոր մյուս գործազուրկներին նպաստ է տրվում տարվա մեջ 6 ամիս, բայց գործազրկության մի ժամանակաշրջանում վոչ ավելի, քան 12 ամիս:

Գործազրկության ժամանակաշրջանն ընդհատվում է, յերբ գործազուրկը մշտական կամ ժամանակավոր աշխատանքի յե ուղարկվում և վորպիսին տևում է մեկ ամսից վոչ պակաս:

Հասարակական աշխատանքներում և աշխատանքային կոլլեկտիվներում զբաղված լինելը չի ընդհատում գործազրկության ժամանակաշրջանը:

## ԼՐԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

Կան մի շարք արտադրական աշխատանքներ, վորոնք թեև յենթակա յեն լրիվ ապահովագրման, բայց ըստ բնույթի կրում են սեզոնային բնույթ, այսինքն տեվում են վոչ տարին բոլոր, այլ տարվա վորոշ յեղանակին (սեզոնում) դադարում են։

Այսպիսի սեզոնային ընդհատումների ժամանակ սեզոնային բանվորները գործազրկության նպաստ են ստանում։

1. Բանվորական սեզոնի ընթացքում, յեթե գործազուրկ են և ապրում են քաղաքում։

2. Աշխատանքների սեզոնային ընդհատումների ժամանակ, յեթե նրանք տարին բոլոր ապրում են քաղաքում։

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ

Գործազուրկներն ըստ իրենց վորակի բաժանված են 3 կարգի, վորոնց համար սահմանված են յերկու տեսակի նպաստներ. մեկը գործազրկության հիմնական նպաստ և մյուսը հավելյալ նպաստ ընտանիքի համար։ Հիմնական նպաստի չափը սահմանված է տարբեր գոտիների համար առանձին (նպաստի չափը տես հավելված № 7)։

## ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ Ո՞Վ Ե ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՆՊԱՍՏ ՍՏԱՆՈՒՄ

Ընտանիքավոր գործազուրկներին հիմնական նպաստի հետ միասին տրվում է հավելյալ նպաստ ընտանիքի հետևյալ անդամների համար. ծերունի ծնողների, յեթե նրանցից մայրը 50 կամ ավելի բարձր և հայրը 55 կամ ավելի բարձր տարիք ունեն և փաստորեն ապրում են գործազուրկների հաշվին, 16 տարիքի չհասած անչափահաս զավակներին, իսկ յեթե մեծ են, այն դեպքում միայն, յեթե անաշխատունակ են դառել մինչև 16 տարեկան դառնալը։

Հավելյալ նպաստ տրվում է ընտանիքի վերևում մատնանշված անդամներին այն դեպքում միայն, յեթե նրանք ինքնուրույն յեկամուտներ կամ դաղումն չունեն։

Հավելյալ նպաստը չի տրվում, յեթե գործազուրկի ամուսինը դաղումն ունի։ Այն դեպքում յերբ ամուսիններից յերկուսն ել գործազուրկ են, հավելյալ նպաստը զավակների համար տրվում է ամուսիններից նրան, վորը ավելի բարձր կարգով է հիմնական նպաստ ստանում, իսկ ծնողների համար ամուսիններից յուրաքանչյուրին առանձին է տրվում։



## ՀԱՎԵԼՅԱԼ ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ

Հավելյալ նպաստը տրվում է հետևյալ չափերով.

1. Ընտանիքի մեկ անաշխատունակ անդամի համար գործազուրկի հիմնական նպաստի 15%-ի չափով։

2. 2 անդամի համար՝ 25%-ի չափով և

3. 3 և ավելի անդամների համար՝ 35%-ի չափով։

Սակայն, պետք է հիշել, վոր գործազուրկին տրվող հավելյալ նպաստը հիմնականի հետ միասին պետք է նրա աշխատանքի վերջին յերեք ամիսների միջին դաղումի կեսից ավելի չլինի. (Նպաստի չափերը տես հավելված № 7)։

## ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ

Գործազրկության նպաստ նշանակելիս հաշվի յեն առնվում գործազուրկի ընտանիքի անդամների անաշխատ յեկամուտները և նրանց դաղումները և գործազրկության նպաստ չի տրվում, յեթե գործազուրկի ամուսինն անաշխատ յեկամուտ ունի և կամ աշխատանքային դաղումն ունի. 1-ին գոտում 120 ռուբլուց, 2-րդ գոտում՝ 108 ռ., 3-րդ գոտում 97 ռուբլուց, 4-րդ» գոտում 88 ռուբլուց, 5-րդ գոտում՝ 80 ռ. և 6-րդ գոտում՝ 72 ռուբլուց բարձր։

## ՅԵՐԲ Ե ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ ՄԻՆՉ ԺԱՄԿԵՏԻ ԼՐԱՆԱԼԸ

Մինչ ժամկետի լրանալը գործազրկության նպաստի տվչությունը կասեցվում է հետևյալ դեպքերում.

1. Յերբ գործազուրկը անհարգելի պատճառներով չի ներկայանում Աշխատանքի Բորսան նշանառման յենթարկվելու։

2. Յերբ գործազուրկը անհարգելի պատճառներով հրաժարվում է Աշխբորսայի առաջարկած աշխատանքից։

3. Եթե Սոցապգանձարկղի միջոցով կատարված հետազոտումներով ապացուցվում ե, որ գործազուրկը գաղումն կամ այլ յեկամուտներ ունի: Իսկ յեթե պարզվի, որ գործազուրկը գաղումն կամ այլ յեկամուտներ ե ունեցել գործազրկության նպաստ նշանակելու մասին դիմելու ժամանակ և դիտավորյալ կերպով թագցրել ե այդ և իր մասին սուտ տեղեկություններ տվել, անմիջապես հանվում ե նպաստառուների ցուցակից (հաշվից) և քրեական կարգով պատասխանատվության յենթարկվում:

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ԺԱՄԱԿԵՏԸ

Գործազրկության նպաստը տրվում ե ամեն ամիս ամսավերջին:

Ժամկետին չստացված գործազրկության համար նշանակված նպաստը կարելի յե պահանջել վոչ ուշ, քան 2 ամսից հետո, իսկ յեթե գործազուրկն արդեն աշխատանքի յե անցել, վոչ ուշ քան մեկ ամսից հետո:

## ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ

Գործազուրկները կատեգորիայի յեն բաժանվում համեմատ նրանց վորակի, արհեստի և գաղումի, ըստ վորում կազմում են 3 կատեգորիա:

1-ին կատեգորիայով անցնում են.

ա) Բարձր վորակի մտավոր աշխատանք կատարող անձինք, վորոնք սովորաբար ունենում են բարձրագույն կրթություն, ինչպես որինակ. ճարտարապետներ, ճարտարագետներ, բժիշկներ, իրավագետներ, գյուղատնտեսներ, մանկավարժներ, գեղարվեստ-նկարիչներ և այլն:

Գործազրկության նպաստն ըստ առաջին կատեգորիայի տըրվում ե վերևում հիշված անձանց այն դեպքում, յեթե նրանք մինչ գործազրկությունը զբաղված են յեղել իրենց պրոֆեսիայով. որինակ՝ յեթե բժիշկը զբաղված ե յեղել բժշկությամբ, իրավագետն իրավաբանությամբ, մանկավարժը—մանկավարժությամբ և այլն:

Այս հանգամանքի վրա պետք ե առանձին ուշադրություն դարձնել, վորովհետև գիտենք, վոր հաճախ բժիշկները, իրավագետները, մանկավարժները և այլ բարձրագույն կրթություն ստացած անձինք անմիջապես իրենց պրոֆեսիայով չեն զբաղվում. յերբեմն վարչական, տնտեսական և այլ գրասենյակային աշխատանքներ են կատարում, ուրեմն և այդպիսի դեպքերում կրթական ցենզն ի նկատի չի առնվելու, այլ տվյալ անձի մինչ գործազրկությունը կատարած աշխատանքը:

բ) Պատասխանատու քաղաքական աշխատավորները, վոր զբաղված են Խորհրդային, արհմիութենական, տնտեսական, կոոպերատիվ և հասարակական աշխատանքներով և աշխատավարձ են ստանում տարիֆային ցանցի 16 և 17 կարգով:

գ) Գեղարվեստի աշխատավորները, վորոնք զբաղված են մշտական աշխատանքով, իսկ պատահական աշխատանքով զբաղվածները այն դեպքում միայն, յերբ նրանց ամսեկան գաղումն ընդհանուր առմամբ. I-ն գոտում 200 ռուբլի, II-գոտում 180 ռ., III-գոտում 162 ռ., IV-գոտում՝ 146 ռ., V-գոտում՝ 132 ռ. և VI-գոտում՝ 120 ռուբլուց պակաս չե:

դ) Արդյունաբերական ձեռնարկություններում, կապի և փոխադրական հիմնարկություններում զբաղված տեխնիկները, մեխանիկները, վարպետները, ձևողները (զակրոյշչիկներ) և այլն:

յե) Բանվորներից 1. այն ջուլհակները, վորոնք անցնում են տարիֆային 5-րդ և բարձր կարգերով, 2. 6-րդ և ավելի բարձր տարիֆ կարգի մետաղագործներն ու թիթեղագործները, 3. 7-րդ և բարձր կարգի լեռնաշխատավորները, չինարարական նյութեր արտադրող կառուցողները, քիմիկոսները, շաքարագործները, փոխադրողները, յերկաթուղային բանվորները, հեռախոսի, հեռագրի և ռադիոյի վրա աշխատողները (բացի վարչական և գրասենյակային կազմից) շոֆֆերներն ու մոտոցիկլիստները և տպագրիչները: 4. 8-րդ և բարձր տարիֆ-կարգում դասված կարողները, փայտագործները, սննդամատակարարները, կոմունալնիկները, կառուցողները, (բացի շինարարական նյութեր արտադրողներից) ժողսննդի աշխատավորները (բացի տընային ծառաներից) տեղական փոխադրության աշխատավորները (բացի շոֆֆերներից և մոտոցիկլիստներից) գեղարվեստի գեղարվեստային տեխնիկական աշխատավորները, գյուղատնտեսական և անտառային աշխատավորները:

դ) Կարմիր Բանակից և Նավատորմիղից խպառ արձակված կամ ժամկետային արձակուրդում գտնվող կարմիր բանակայինները և հրամ-կազմը:

II կատեգորիայով անցնում են.

ա) Հետևյալ պրոֆեսիայի ծառայողները (բացի 1-ին կատեգորիայով անցնողներից):

բ) Լուսաշխատավորները, նույն թվում և մասնագիտական դըպրոցների դասատուները (բացի վարչական և գրասենյակային կազմից, վորոնք հիմնական աշխատավարձ են ստանում. I-ն դասում ամիսը 50 ռ., II-դում՝ 45 ռ., III-դում՝ 40 ռ., IV-դում՝ 36 ռ., V-դում՝ 33 ռ. և VI-դում՝ 30 ռուբլուց վոչ պակաս:

2. ա) Բուժական միջին պերսոնալը և բուժտեխնիքական պերսոնալը, վորոնք հիմնական աշխատանքի համար ամսեկան աշխատավարձ են ստնում. I-ն դասում ամիսը 45 ռուբլի, II-դում՝ 40 ռ., III-դում՝ 36 ռ., IV-դում՝ 33 ռ., V-դում՝ 30 ռ. և VI-դում 27 ռուբլուց վոչ պակաս:

բ) Ֆարմացևտիկական աշխատանքները (դեղատան աշխատավորները), վորոնք հիմնական աշխատանքի համար աշխատավարձ են ստանում I-ն դասում ամիսը 55 ռ., II-դում՝ 50 ռ., III-դում՝ 45 ռ., IV-դում՝ 40 ռ. V-դում՝ 36 ռ. և VI-դում՝ 33 ռուբլուց վոչ պակաս:

3. Ջրային փոխադրության աշխատավորները (բացի գրասենյակային կազմից), վորոնք հիմնական աշխատանքի համար աշխատավարձ են ստանում. I-ն դասում ամիսը 70 ռ., II-դում՝ 63 ռ., III-դում՝ 57 ռ., IV-դում՝ 52 ռ., V-դում՝ 47 ռ. և VI-դում՝ 42 ռուբլուց վոչ պակաս:

4. 14-րդ և ավելի բարձր տարիֆ-կարգի յերկաթուղային աշխատավորները:

5. Փոստ-հեռագրային և ռադիոյի աշխատավորները և հեռագրատան գրասենյակային այն աշխատավորները, վորոնք իրենց հիմնական աշխատանքի համար աշխատավարձ են ստանում. I-ն դասում ամիսը 110 ռ., II-դում՝ 100 ռ., III-դում՝ 90 ռ., IV-դում՝ 81 ռ., V-դում՝ 73 ռ. և VI-դում՝ 66 ռուբլուց վոչ պակաս:



6. Խանութների կառավարիչներն ու նրանց տեղակալները, մանրավաճառները:

7. Գեղարվեստի աշխատավորները, վորոնք զբաղված են մըշտական աշխատանքով և իրենց հիմնական աշխատանքի համար աշխատավարձ են ստանում. I-ն դասում ամիսը 100 ռ., II-դում՝ 90 ռ., III-դում՝ 81 ռ., IV-դում՝ 73 ռ., V-դում՝ 66 ռ. և VI-դում՝ 60 ռուբլուց վոչ պակաս: Նույնը և այն գեղարվեստագետները, վորոնք զբաղված են պատահական աշխատանքներով և վերևում մատնանշված չափերով ամսական գաղումն ունեն:

8. Բոլոր մյուս մտավոր և գրասենյակային աշխատավորները, վորոնք ըստ իրենց հիմնական աշխատանքի ամսական աշխատավարձ են ստանում. I-ին դասում ամիսը 125 ռ., II-դում՝ 113 ռ., III-դում՝ 102 ռ., IV-դում՝ 92 ռ., V-դում՝ 83 ռ. և VI-դում՝ 75 ռուբլուց վոչ պակաս:

բ) Բանվորներից հետևյալները.

1. 3-րդ և 4-րդ տարիֆ կարգի ջուլհակները:

2. 4-րդ և 5-րդ տարիֆ կարգի մետաղագործները և թղթագործները:

3. 5-րդ և 6-րդ կարգի լեռնաշխատավորներն ու քիմիկոսները:

4. 5-րդ և 6-րդ կարգի շաքարագործները, շինարարական նյութեր արտադրող և մշակող կառուցողները, կաշեգործները, ջրային փոխադրողները, յերկաթգծի աշխատավորները, հեռագրային, հեռախոսային և ռադիոյի աշխատավորները (բացառությամբ վարչական և գրասենյակային կազմի) տպագրողները, ժողսննդի աշխատավորները (բացառությամբ տնային սպասավորների):

5. 5-րդ և 7-րդ կարգի կոմունալնիկները, սննդամատակարարողները փայտագործները, գյուղատնտեսական և անտառային բանվորները, գեղարվեստի գեղարվեստագիտական տեխնիքական կազմը:

6. 6-րդ և 7-րդ կարգի կարողները, տեղական փոխադրության աշխատավորները (բացի շոֆֆերներից և մոտոցիկլիստներից) կառուցողները, (բացի շինարարական նյութերի մշակումով և արտադրությամբ զբաղվողներից):

III կատեգորիայով ացնում են.

Գործազրկության 3-րդ կատեգորիայով անցնում են բոլոր մյուս գործազուրկ բանվորներն ու ծառայողները, վորոնք ըստ ի-

քենց վորակի, աշխատավարձի և արհեստի չեն կարող անցնել 1-ին և 2-րդ կատեգորիայով:

Գործազուրկին այս կամ այն կատեգորիայում դասելիս ի նկատի չի առնվում, ինչպես ասված է նրա տարիֆ կարգը կամ վերջին աշխատանքի աշխատավարձը, ըստ վորում վճռողական նշանակություն ունի այն հանգամանքը, թե գործազուրկը վերջին անգամ ինչ արհեստով է զբաղված յեղել և վոչ այն, թե վո՞ր արհմիության անդամ է յեղել:

Յեթե գործազուրկի վերջին աշխատանքը տևել է 6 ամսից պակաս, այդ դեպքում նրան այս կամ այն կատեգորիայով անց կացնելու համար պետք է ղեկավարվել նրա տարիֆ կարգով կամ նրա վերջին տարվա մեջ 6 ամսից ավելի տևած նույն աշխատանքի աշխատավարձով:

## ՄԱՍՆԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒՄ

Կան մի շարք աշխատանքներ, վոր կապված են տարվա յեղանակի (սեզոնի) հետ և տարվա մեջ տևվում են մի քանի ամիս միայն (գյուղատնտեսական աշխատանքներ և այլն). այդպիսի աշխատանքները կոչվում են սեզոնային, իսկ այդ աշխատանքները կատարող անձինք սեզոնային բանվորներ:

Սեզոնային բանվորները ապահովագրվում են վոչ լրիվ չափով, այսինքն Սոցապգծով տրամադրվող բոլոր արտոնությունները չեն վայելում, այլ նրանց վրա տարածվում է մասնակի ապահովագրումը, վորովհետև վարձու աշխատանքը չէ, վոր հանդիսանում է նրանց ապրուստի միակ աղբյուրը. նրանք սովորաբար կապված են լինում գյուղացիական տնտեսությամբ, վորը և նրանց ապրուստի հիմնական աղբյուրն է հանդիսանում:

Մասնակի ապահովագրման յենթակա բոլոր սեզոնային և ժամանակավոր բանվորները բաժանված են 2 խմբակի.

Մասնակի ապահովագրման 1-ին խմբակով անցնող սեզոնային և ժամանակավոր բանվորները սոցապգծով օգնություն են ստանում հետևյալ դեպքերում.

1) Հիվանդության դեպքում, 2) քարանտինի յենթարկվելու դեպքում, 3) ընտանիքի հիվանդ անդամին մինչ հիվանդանոց տեղավորվելը տանը խնամելու անհրաժեշտության դեպքում (յերբ ուրիշ խնամող չկա), 4) այն դեպքում, յերբ սեզոնային բանվորուհին ինքն է յերեխա ծնում (հղության և ծննդաբերության և լրացուցիչ նպաստներ յերեխային սնելու և խնամելու համար միանվագ նպաստ և սննդադրամ) և 5) աշխատանքի միջոցին հաշմության կամ արհեստակցական հիվանդացումի հետևանքով հաշմանդամ դառնալու դեպքում, իսկ նույն պատճառներից մեռնելու դեպքում ընտանիքը ստանում է թե թաղման նպաստ և թե կենսաթոշակ:

Մասնակի ապահովագրման յենթակա 2-րդ խմբակով անցնող սեզոնային և ժամանակավոր բանվորները սոցապգծով հետևյալ օգնությունն են ստանում. 1) հիվանդության դեպքում և 2) հաշմության կամ արհեստակցական հիվանդացումից առաջացած հաշմանդամության դեպքում իսկ մեռնելու դեպքում ընտանիքը ստանում է թաղման նպաստ և կենսաթոշակ:

Մասնակի ապահովագրման յենթակա սեզոնային և ժամանակավոր աշխատանքների առանձին ցուցակներ կան կազմած և բոլոր այն աշխատանքները, վորոնք այդ ցուցակներում չկան, ապահովագրվում են լրիվ չափով:

## Ո՞ՒՄ Է ԲՈՂՈՔԱՐԿՎՈՒՄ ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՂԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Սոցապգանձարկղների վորոշումների դեմ ապահովագրվածները կարող են բողոքել Հանրապետական Սոցապգանձարկղին, իսկ վերջինիս դեմ Սոցապահովագրության Գլխավոր Վարչությանը (Թիֆլիզում):

Ապահովագրվածների բողոքները քննում և լուծում է տեղի հատուկ կազմված Կոնֆլիկտային Հանձնաժողովը, նախագահությամբ Սոցապմարմնի ներկայացուցչի և անդամակցությամբ Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի և Արհեստակցական Միությունների Խորհրդի ներկայացուցիչների:

Կոնֆլիկտային Հանձնաժողովների վճիռները վերջնական են և վոչ յենթակա բողոքարկման:

Ծանոթություն.—Աշխժողկոմը հրատարակում է գրասենյակային և մտավոր աշխատանքի այն պրոֆեսիաների ցանկը, վորոնց համար, նրանց առանձնահատկությունների պատճառով, մայրության առթիվ տրվող արձակուրդների ժամանակը սահմանվում է ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո:

# ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ № 1 ԱՇԽՈՐԵՆՍԳԻՐՔ ՀՈԴ. 175

Սոցիալիստական Ապահովագրությունը տարածվում է վարձու աշխատանքով զբաղված բոլոր անձանց վրա, ուր և վոր զբաղված լինեն նրանք, պետական, հասարակական, կոոպերատիվ, կոնցեսսիոն վարձակալական, խառն կամ մասնավոր ձեռնարկություններում, հիմնարկություններում կամ տնտեսություններում թե մասնավոր անձանց մոտ, անկախ նրանց կատարած գործի բնույթից ու տևողությունից և նրանց վարձատրելու յեղանակից:

## ՀԱՎԵԼՎԱԾ № 2 ԱՇԽՈՐԵՆՍԳԻՐՔ ՀՈԴ. 178

Ապահովագրական վճարները հատուցանում են այն ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսությունները կամ անձինք, վոր վարձու աշխատանքից են օգտվում, առանց ապահովագրվողի վրա տուրք գնելու իրավունք ունենալու և առանց նրանց աշխատավարձից կորելու:

## ՀԱՎԵԼՎԱԾ № 3 ԱՇԽՈՐԵՆՍԳԻՐՔ ՀՈԴ. 191

Յեթե ձեռնարկությունները, հիմնարկությունները, տնտեսությունները և առանձին անձինքն չհատուցանեն իրենցից պահանջվող ապահովագրական վճարները, այդ բնավ չպիտի զրկե նրանց մոտ վարձով աշխատողներին սույն Որենսգրքի 176 հոդվածներով նախատեսված բոլոր նպաստներն ստանալու իրավունքից:

## ՀԱՎԵԼՎԱԾ № 4 ԱՇԽՈՐԵՆՍԳԻՐՔ ՀՈԴ. 176

Սոցիալիստական ապահովագրությունն ընդգրկում է. ա) բժշկական ոգնություն հասցնելը. բ) աշխատունակությունը կորցնելու դեպքում (հիվանդություն, խեղանդամություն, քարանտին, հղություն, ծննդաբերություն, ընտանիքի հիվանդ անդամի խնամելը) նպաստներ տալը. գ) լրացուցիչ նպաստներ



տալը (յերեխա կերակրելու, խնամելու, թաղման համար). դ) գործազրկության դեպքում նպաստներ տալը՝ նրանց կերակրողի մահվան կամ անհայտ բացակայության դեպքում:

## ՀԱՎԵԼՎԱԾ № 5 ԱՇԽՈՐԵՆՍԳԻՐՔ ՀՈԴ. 132

Ֆիզիքական աշխատանքով զբաղված կանայք ազատվում են աշխատանքից՝ ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո, իսկ գրասենյակային և մտավոր աշխատանքով զբաղվածները՝ ծննդաբերությունից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ հետո:

# ՀԱՎԵԼՎԱԾ № 6

Որոշում Անդրկովաշխժողկոմատի, 11 փետրվարի 1924 թ.
(Անդրկովաշխժողկոմատի 1924 թ. օգոստոսի 27-ի № 119 և 1925 թ. սեպտեմբերի 19-ի № 61 որոշումներով մտցրված լրացումներով):

Այն արհեստների մասին, որոնք ֆիզիքական աշխատանքի հետ հավասար իրավունք են տալիս ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո արձակուրդ ստանալու:

Աշխօրենսգրքի 132-րդ հոդվածի ծանոթության հիման վրա Անդրկովաշխժողկոմատը որոշեց.

Աշխօրենսգրքի 132-րդ հոդվածով ֆիզիքական աշխատանք կատարող բանվորուհիներին տրամադրված, ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո, արձակուրդի իրավունքը տարածել հետևյալ արհեստների վրա.

1. Հեռախոսային կայանի հեռախոսուհիների.

2. Հեռագրողուհիների.

3. Մանկաբարձուհիների.

4. Գթության քույրերի.

5. Մասսաժիստկաների.

6. Հոգեկան հիվանդանոցների և բաժինների բժշկուհիների, բուժակուհիների և վերահսկողների.

7. Տներում օգնություն հասցնող գյուղական շրջիկ բժիշկների և բուժակուհիների, շրջիկ խմբերում վիրաբուժական և ինֆեկցիոն հիվանդանոցների և բաժինների և ծննդաբերական հիմնարկների բժիշկների և բուժակուհիների.

8. Խորհրդային բուժարանների ատամնաբուժների.

9. Խորհրդային տների, պարտեզների, գաղութների, արատավոր մանկանց տների ղեկավարողների և դաստիարակչուհիների, գյուղական դպրոցների ուսուցչուհիների, 1 և 2 աստիճանի փակ դպրոցների դաստիարակչուհիների, ֆիզիքական կրթության հրահանգչուհիների և կայաններում լուս-կրթական աշխատանք տանող անձանց.

10. Անմիջապես բեմ դուրս եկող դրամայի, օպերայի, բալետի և կրկեսի դերասանուհիների.

11. Գիշերային աշխատանք կատարողների.



12. Մշտական շրջագայությունների հետ կապված հրահանգչական աշխատանքներ կատարողների.

13. Դեղատան աշխատողներ՝ ասիստենտկաների, ֆառմացևտիցաների, լաբորանտկաների, դեֆեկտորների, պուլուտանտկաների.

14. Փոստի և փոստ-հեռագրատան նյութերը դասավորողների, խորհրդային բաշխիչ կայանների ծախսարարների.

15. Մեքենագրուհիների.

16. Ռենտգենյան կաբինետներում աշխատող և բոլոր աշխատանքներում ամբողջ օրը անմիջորեն մասնակցող բժշկուհիների, բուժակուհիների և լաբորանտկաների.

17. Առանձնապես վտանգավոր համաճարակների՝—չումայի, խոլերայի, ծաղկի և բծավոր տիֆի դեմ պայքարող և հիվանդների հետ անմիջական շփում ունեցող բժշկուհիների, բուժակուհիների, լաբորանտկաների.

18. Հիմնարկ-ձեռնարկություններում մշտապես զբաղված ու սիստեմատիկորեն նիստերի արձանագրություններ, դասախոսություններ և այլն սղագրողների վրա.

Անդրկովաշխժողկոմ՝ Ս. ՑԱԿՈՒԲՈՎ

Ի. տ. ընդհանուր կազմբաժվարի՝ Լ. ԹՈՒՄԱՆՈՎ

# ՀԱՎԵԼՎԱԾ № 7

*1927 թ. հունիսի 1-ից Ս. Խ. Հ. Մ. սահմաններում սոցիալական ապահովագրության գծով տրվող նպաստների և թոշակների հետևյալ չափերն են սահմանված.*

## 1. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՊԱՍՏՆԵՐ

### ա) Թաղման նպաստ (տրվում է անկախ ապահովագրվածի աշխատավարձի չափից).

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| *1-ին գոտում հասակավորի (10 տարեկ. բարձր) համար* | 45 | |
| *փոքրահասակի (մինչև 10 տար.) համար* | 22 | 50 |
| *2-րդ գոտում* | 35 | |
| | 17 | 50 |
| *3-րդ գոտում* | 29 | |
| | 14 | 50 |
| *4-րդ գոտում* | 27 | |
| | 13 | 50 |
| *5-րդ գոտում* | 25 | |
| | 12 | 50 |
| *6-րդ գոտում* | 21 | |
| | 10 | 50 |

### բ) Միանվագ նպաստ մանկական օժիտի համար.

| | |
|---|---|
| *1-ին գոտում* | 30 |
| *2-րդ գոտում* | 28 |
| *3-րդ գոտում* | 26 |
| *4-րդ գոտում* | 24 |
| *5-րդ գոտում* | 22 |
| *6-րդ գոտում* | 16 |

Ծանոթություն.—1. *Հայաստանում կիրառվում են 27 թ. օգոստոսի 1-ից։*

2. *Յերևան քաղաքը դասված է 3-րդ գոտում, իսկ Հայաստանի մյուս վայրերը գտնվում են 4-րդ գոտում։*



### գ) Սննդադրամ յերեխայի կերակրելու համար.

| | | |
|---|---|---|
| *1-ին գոտում* | 8 | |
| *2-րդ գոտում* | 7 | |
| *3-րդ գոտում* | 6 | 50 |
| *4-րդ գոտում* | 6 | |
| *5-րդ գոտում* | 5 | 50 |
| *6-րդ գոտում* | 4 | |

## 2. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

### ա) Հիմնական նպաստ.

| | | | |
|---|---|---|---|
| *1-ն գոտում* | *1-ին կարգի գործազուրկին* | 26 | |
| | *2-րդ* » » | 19 | |
| | *3-րդ* » » | 15 | |
| *2-դ գոտում* | *1-ին* » » | 22 | |
| | *2-րդ* » » | 17 | |
| | *3-րդ* » » | 14 | |
| *3-դ գոտում* | *1-ին* » » | 18 | |
| | *2-րդ* » » | 13 | 50 |
| | *3-րդ* » » | 11 | |
| *4-դ գոտում* | *1-ին* » » | 16 | |
| | *2-րդ* » » | 12 | |
| | *3-րդ* » » | 10 | |
| *5-դ գոտում* | *1-ին* » » | 14 | |
| | *2-րդ* » » | 10 | |
| | *3-րդ* » » | 8 | |
| *6-դ գոտում* | *1-ին* » » | 11 | |
| | *2-րդ* » » | 8 | |
| | *3-րդ* » » | 6 | |

### բ) Հավելյալ նպաստ ընտանիքի համար.

*Յուրաքանչյուր գործազուրկ իր ընտանիքի համար ստանում է.*

| | |
|---|---|
| *1 անդամի համար հիմնական նպաստի* | 15%-ը |
| *2* » » » | 25%-ը |
| *3 և ավելի անդամի համար հիմնական նպաստի* | 35%-ը |

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿԱՐԻ ԹՈՇԱԿ

### ա) Նվազագույնը.

| | | Ռ. | Կ. |
|---|---|---|---|
| 1-ն գոտում՝ | 1-ին կարգի անկարին մինչև 40 ռ. դատում ունեցողին—լրիվ դատումը | | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 40 ռ. դատումի . . . . | 2/3-ը | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 40 ռ. դատումի . . . . | 1/2-ը | |
| | 1-ին կարգի անկարին 40-ից մինչև 60 ռ. դատում ունեցողին . . . . | 40 | |
| | 2-րդ կարգի անկարին դատումի 4/9-ը բայց ոչ ավելի . . . . | 26 | 60 |
| | 3-րդ կարգի անկարին դատումի 1/3-ը բայց ոչ ավելի . . . . | 20 | |
| | 1-ին կարգի անկարին 60 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 2/3-ը, բայց ոչ ավելի . . . . | 100 | |
| | 2-րդ կարգի անկարին դատումի 4/9-ը բայց ոչ ավելի . . . . | 66—60 | |
| | 3-րդ կարգի անկարին դատումի 1/3-ը, բայց ոչ ավելի . . . . | 50 | |
| 2-դ գոտում՝ | 1-ին կարգի անկարին մինչև 38 ռ. դատումն ունեցողին—լրիվ դատումը | | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 38 ռ. դատումի . . . . | 2/3-ը | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 38 ռ. դատումի . . . . | 1/2-ը | |
| | 1-ին կարգի անկարին 38 ռ. մինչև 57 ռ. ստացողին . . . . | 38 | |
| | 2-րդ կարգի անկարին 38 ռ. մինչև 57 ռ. ստացողին . . . . | 25 | 30 |
| | 3-րդ կարգի անկարին 38 ռ. մինչև 57 ռ. ստացողին . . . . | 19 | |
| | 1-ին կարգի անկարին 57 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 2/3-ը, բայց ոչ ավելի . . . | 90 | |
| | 2-րդ կարգի անկարին 57 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 4/9-ը, բայց ոչ ավելի . . . | 60 | |
| | 3-րդ կարգի անկարին 57 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 1/2-ը, բայց ոչ ավելի . . . | 45 | |
| 3-դ գոտում՝ | 1-ին կարգի անկարին մինչև 30 ռ. դատումն ունեցողին—լրիվ դատումը | | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 30 ռ. դատումի . . . . | 2/3-ը | |
| | 3-րդ կարգի անկարին մինչև 30 ռ. դատումի . . . . | 1/2-ը | |
| | 1-ին կարգի անկարին 30 ռ. մինչև 45 ռ. ստացողին . . . . | 30 | |
| | 2-րդ կարգի անկարին 30 ռ. մինչև 45 ռ. ստացողին . . . . | 20 | |
| | 3-րդ կարգի անկարին 30 ռ. մինչև 45 ռ. ստացողին . . . . | 15 | |
| | 1-ին կարգի անկարին 45 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 2/3-ը, բայց ոչ ավելի . . . | 80 | |
| | 2-րդ կարգի անկարին 45 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 4/9-ը, բայց ոչ ավելի . . . | 55 | 33 |
| | 3-րդ կարգի անկարին 45 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի 1/3-ը, բայց ոչ ավելի . . . | 40 | |
| 4-դ գոտում՝ | 1-ին կարգի անկարին մինչև 26 ռ. դատումն ունեցողին—լրիվ դատումը | | |
| | 2-րդ կարգի անկարին մինչև 26 ռ. դատումի . . . . | 2/3-ը | |
| | 3-րդ կարգի անկարին մինչև 26 ռ. դատումի . . . . | 1/2-ը | |
| | 1-ին կարգի անկարին 26 ռ. մինչև 39 ռ. ստացողին . . . . | 26 | |

Ռ. Կ.

**4-դ գոտում՝**

2-րդ կարգի անկարին 26 ռ. մինչև 39 ռ. ստացողին . . . . 17

3-րդ կարգի անկարին 26 ռ. մինչև 39 ռ. ստացողին . . . . 13

1-ին կարգի անկարին 39 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի $^2/_3$-ը, բայց ոչ ավելի . . . . 70

2-րդ կարգի անկարին 39 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի $^4/_9$-ը, բայց ոչ ավելի . . . . 46 65

3-րդ կարգի անկարին 39 ռ. բարձր դատումն ունեցողին դատումի $^1/_3$-ը, բայց ոչ ավելի . . . . 35

**5-դ գոտում՝**

1-ին կարգի անկարին մինչև 23 ռ. դատումն ունեցողին—լրիվ դատումը

2-րդ կարգի անկարին մինչև 23 ռ. դատումի . . . . $^2/_3$-ը

3-րդ կարգի անկարին մինչև 23 ռ. դատումի . . . . ½-ը

1-ին կարգի անկարին 23-ից մինչև 34 ռ. 50 կոպեկ . . . . 23

2-րդ կարգի անկարին 23-ից մինչև 34 ռ. 50 կոպեկ . . . . 15 30

3-րդ կարգի անկարին 23-ից մինչև 34 ռ. 50 կոպեկ . . . . 11 50

1-ին կարգի անկարին 34 ռ. 50 կ. բարձր ստացողին դատումի $^2/_3$-ը, բայց ոչ ավելի . . . . 60

2-րդ կարգի անկարին 34 ռ. 50 կ. բարձր ստացողին դատումի $^4/_9$-ը, բայց ոչ ավելի . . . . 40

3-րդ կարգի անկարին 34 ռ. 50 կ. բարձր ստացողին դատումի ½-ը, բայց ոչ ավելի . . . . 30



Ռ. Կ.

**6-դ գոտում՝**

1-ին կարգի անկարին մինչև 19 ռ. ստացողին . . լրիվ դատումը

2-րդ կարգի անկարին դատումի . . . $_9/^2$-ը

3-րդ կարգի անկարին դատումի . . . ½-ը

1-ին կարգի անկարին 19-ից մինչև 28 ռ. 50 կոպեկ ստացողին . . . . 19

2-րդ կարգի անկարին 19-ից մինչև 28 ռ. 50 կոպեկ ստացողին . . . . 12 60

3-րդ կարգի անկարին 19-ից մինչև 28 ռ. 50 կոպեկ ստացողին . . . . 9 50

1-ին կարգի անկարին 28 ռ. 50 կ. բարձր դատումն ունեցողին դատումի $^2/_3$-ը, բայց ոչ ավելի . . . . 50

2-րդ կարգի անկարին 28 ռ. 50 կ. բարձր դատումն ունեցողին դատումի $^4/_9$-ը, բայց ոչ ավելի . . . . 33 30

3-րդ կարգի անկարին 28 ռ. 50 կ. բարձր դատումն ունեցողին դատումի ½-ը, բայց ոչ ավելի . . . . 25

## 4. ՄԱՀԱՑՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

1 անաշխատունակ անդամով ընտանիքին մահացածի թոշակի $^1/_3$-ը
2 » » » » » ½-ը
3 և ավելի » » » » » $^2/_3$-ը

## 5. ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

1-ին կարգի հաշմանդամի փաստացի դատումը . . . . լրիվ
2-րդ » » » » . . . . $^3/_4$-ը
3-րդ » » » » . . . . ½-ը
4-րդ » » » » . . . . $^1/_3$-ը
5-րդ » » » » . . . . $^1/_6$-ը
6-րդ » » » » . . . . $^1/_{10}$-ը

## 6. ՄԱՀԱՑԱԾ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ԹՈՇԱԿ

1 անաշխատունակ անդամով ընտանիքին մահացածի թոշակի $^1/_3$-ը
2 » » » » » ½-ը
3 և ավելի » » » » » $^3/_4$-ը

## ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

| | | |
|---|---|---|
| 1-ին գոտում | 180 | ռ. |
| 2-րդ » | 168 | » |
| 3-րդ » | 156 | » |
| 4-րդ » | 144 | » |
| 5-րդ » | 132 | » |
| 6-րդ » | 120 | » |

## ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

| | | |
|---|---|---|
| 1. Ծառայության մեջ յեղածներին | 10 | ռ. |
| 2. Գործազուրկներին | 20 | » |



ՀՀ Ազգային գրադարան
NL0977026

**ԳԻՆԸ 40 ԿՈՊ.**

11
26572